ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N15 -Ն

<<25>> մայիս 2017 թվական գյուղ Ձորակապ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-073-0105-0119 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 5.16684 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ <<ԲԱՐԵԲԵՐ ՏՈՒՖ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի օգոստոսի 6-ի թիվ 79-Ա հրամանով <<ԲԱՐԵԲԵՐ ՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 2016 թվականի օգոստոսի 6-ի ՇԱԹ-29/540 թույլտվությունը և N Լ-540 լեռնհատկացման ակտը, ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017թվականի ապրիլի 14-ի թիվ 33 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-073-0105-0119 կադաստրային ծածկագրով 5.16684 հեկտար հողամասը տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 90 տարի ժամկետով,70000 /յոթանասուն/ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության

տրամադրել <<ԲԱՐԵԲԵՐ ՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

3. Հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐԵՍՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ՝ կողմ ----------

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ՝ կողմ ----------

ԱԼԲԵՐՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

<<25>> մայիսի2017 թվական
գ. Ձորակապ